Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ « Մաթեմատիկա» /5 դասաժամ/, «Տեխնոլոգիա » /4 դասաժամ/ , <<Կերպարվեստ>> /2 դասաժամ/, <<Երաժշտություն>> /2 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարերի:
Հարցազրույցի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- 1 լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությանը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն(Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման դասաժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 5-ից, մինչև ապրիլի 18-ը ներառյալ , ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00 -ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա ապրիլի 20-ին, ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել (094)00-71-79 հեռախոսահամարով: